


ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԱՐԴՈՒԹ ԵՒՐ ՍԻՐՏԸ ՔԱՐԱՅՆԵԼՆ ՈՒ ԱՆՁԳԱՅԱՑՆԵԼ:

Դաշտ + Առաջ. ԽԸ, 26, 27:

Մոլութեան ճանապարհը սկզբումն թէև մի լոյն ճանապարհ է, ու մարդագետինների միջով է գնում, բայց շաբունակութիւնը գտանգարեր է լինում, իսկ վերջն՝ գիշեր ու սարսափելի խաւար։ Առաքինութեան նեղ շաւիղը, թէև սկզբումը առապար, սեպացած ու շատ գժուար անցանելի է, բայց, առաջ գնալով, տանումէ գէպի փրկութիւն և վերջապէս գէպի հրճուանք ու ցընծութիւն։



Դրեթէ երկու հազար տարի է, որ Քրիստոսի տուած ուսումնաշխարհիու վերայ կայ։ Այս հաւատքով շատ դարեր աղքել են մեր հայրերն և այս հաւատով իւրեանց աչքը փակել աշխարհին։ Դրեթէ երկու հազար տարուան միջոցումը մարդիկ իւրեանց կենաց տյառիսի երկարատև փորձառութեամբն երաշխաւորել են և անուրանաղի վկայ կանգնել թէ։ Քրիստոսի մեզ սորվեցրած հաւատար բարերար է մարդկային ազգի համար։ Ամենայն ազգերն, որ չրիստոնէութիւնն ընդունել են, առաջուայ վրայ աւելի աղնուացել են, աւելի իմաստուն, աւելի բաղդաւոր են իրանց տեսել։ Վայրենի ազգերն իրանց կոպիտ վարքն և բարքը թողել են ու եղել են աւելի քաղցրաբարոյ ու մարդասէր։ Այսօր ևս քրիստոնէակոն թագաւորութիւններն են, որոնց մէջ որ արդիւնաբերութիւններ, ճարտարութիւններ, արհետներն ու գիտութիւններն ամենագեղեցիկ կերպով ծաղկումեն, և որոնց մէջն որ ազգի ազատութիւններն ամենից աւելի յարգվումեն, ամեն մի բնակչի ունեցածն ու իրաւունքները հզօրի ամենայն զօրութեան առաջը ամենալաւ կերպով սկաշտապանուած են։ Բայց ընդհակառակն այն երկիրներու մն, ուր որ մարդիկ զեռ ևս լուսաւորուած չեն քրիստոնէակոն կրօնի լուսովն, իշխումէ զեռ ևս շատ և շատ կողմաննէ անպիտութեան, բռնութեան, գերութեան, ազիտութեան կամացա-

կանոթիւնը։ Խ՞նդն աւելի համողիչ կարող էր լինել քրիստոնէական ուսման ունեցած արժանիքի մատիճ, քանի թէ այս փորձը որ ամենի աշքի առաջն է։ Խ՞նդն աւելի կարող էր մեզ համար համողական ապացոյց լինել, որ միայն Յիսուսի Քրիստոսի երկնային առողջութիւնն ու միրկարար վարդապետութիւնն աղքաց երջանկութեան ճշմարիտ հիմնագարն է։

Քրիստոսի կրօնի արժանաւորութիւնն ապացուցուեց թէ ամենամեծ և թէ ամենափոքր բանի մէջ։ Մարդկանցից ամենաառաքինիներն էին և են նաև այսօր ճշմարտապէս ամեներջանիկներն։ Մի մարդ՝ ինչքան էլ որ խելօք լինի, բայց եթէ ուղիղ, անարատ ու աննինգ միոք, սիրտ չունի, արհամարհվումէ ու նորանից խորշումն։ Որչափ էլ որ զօրաւոր, որչափ էլ որ հարուստ լինի, կընկնի։ Հնարագիտութիւնով ու խորամանկութիւնով կարող է նու շատ բարձրանալ, բայց միայն նորա համար, որ՝ վաղ թէ ուշ՝ աւելի խորը գահավիժուի իւր բարձրութիւնից։ Թէ և քաղաքական օրէնքներից գուրս ամենելին մի գործ էլ յը տեսնի իւր օրինապահութեամբն, բայց, եթէ մի և նոյն ժամանակ սրտով Աստուածանից բալորովին հեռացած ու նորան մուացած է, միշտ ինքն իւր հետ երկպառակութեան մէջ կըլինի ու անհաշտ։ Նա ներքին խաղաղութեան անգիւտ զարդը չունի, որովհեաւ Աստուծոյ տիեզերական կարգ ու կանոնին հակառակ է ասլրում, իւր ամենալաւ համոզմանց և իւր խղճմտանքին հակառակ է գնում։ Աւելի ևս ցաւալի է, որ կան քրիստոնեայք, որ հակառակ հն գնում աշխարհի ամենայն փորձառութեանց, մարդոց մէջ ամենամատունների ամենայն յորդորներին ու իրանց կեանքով տուած օրինակներին, միանգամայն և իւրեանց խղճմտանքի աղդաբարութիւններին, որով պիտի զգուշանային, և՝ իրանց անբարոյականութեան ու կրօն արհամարհելու մէջ կամակորութեամբ հաստատ մնում են։ — Մարդկային բնութեան խելք չհասցնելու չափ գէսլի վատն փոխուել, վատթարանալ, վայրենանալ է, որ կեանքի համար խելք ունեցողներ են իրանց ձեւացնում և այդ կերպով, հպարտանումեն, որ իրանց համար՝ իբրև բան հասկացող մարդոց համար՝ ամենայն իմաստութիւն՝ տղայամտութիւն, կամ պարզմտութիւնից յառաջացած երազատեսութիւն է, և ամենայն առաքինութիւն՝ ծիծաղելի երևակայութիւն։ ամենայն կրօն՝ միայն քահանաներից հնարած բան են համարում։

Ճշմարիտն ասելով, ողյութիսի խելքով ու մոքայ ծոռուած՝ մարդութիւնից զորս եկած հրէշների հետ ոչ խօսել արժէ և ոչ զորանց ասածները նրել։ Ամենայն ժամանակի ոյդաթիսի օրինակներ ենք են, և պատմութիւնն ողբեցնումէ, որ Առառուած արհամարդ Հողներն ու բարոյապէս ապականուածներն ամենայն տեղ նայն վերջն են ունեցել, ոյսինքն շուտ վշացել ու աշխարհքից անհետացել են։ Արդէն մեզ յայտնի է, որ ամենահին ժամանակներում գտնուել են այդ տեսակ զգուելի մարդիկ։ Արդէն Պօղոս Առաքեալն, որ Հւովմ էր գտնվում՝ կրօնական և բարորոկան անկրան օրերում՝ պատճառ ունէր նախնի իմաստունների խօսքը կրկնելու թէ՝ «Գնու այս ազգի մօտն ու ասա ականջներով էլ լը»+, և աշուն էլ պէսնելու և չի է հանալ։ Արդէն այս աղջի սիրու գործացած է։

Մարդուս սրտի քարանալն ու անզգայանալն նորա բարոյապէս փշանալու և մարդութիւնից գուրս գալու ամենաբարձր առողջամնն է, որովհետեւ անզգայ է այնուշետեւ դէպի ամեն մի գրգիռ ու հրապոյր ի բարին, և ամեն մի բարձր ու վսեմ ճշմարտութիւն հասկանալու համար բթայած։ Զգացման այս բթանալն ու անկենդանութիւնը սովորական միջոցներով բժշկել այլ և՛ո անկարելի է։ Այդպիսի մարդոց, ինչքան ուղես, զգուշացնուր, խրատիք, յորդորիք, ապացոյցներ տուր, սիրտ շարժող ու համազող խօսքեր առաջը դիր, ամենն էլ զուր է։ Այդպիսի մարդոց իրանց անկրօնութեան սաստիկ զգալի վնասուկարներգործութիւններն անգամ ամենելին չեն օգնիլ իրանց փոխուելուն, լաւանալուն։ Նոքա իրանց կամապաշտութիւնովն անշարժ մնում են իրանց ինքնաւեր հակումների մէջ, և ամենայն չար բան, որ իրանց պատահումէ, ոչ թէ իրանց անձնակարծան վարքի հետեւանքն են համարում, այլ մի ձախորդ պատահամունք։ և սաստիկ ափսոսում են, որ աւելի խելօքութիւնով զորա դէմը չարին, ինչ որ հարկն էր անել։ Բոլոր մարդկութիւնը նրանց երեւումէ իբրև մի ահագին բազմութիւն սնապաշտ յիմարների, որոնց վրայ իշխելու իրաւունք ունի նաև՝ ով որ խորամանկ է ու զօրաւոր։ Կրօնները, բարի սովորութիւնները, առաքինութիւնը՝ մոլութիւնը նրանց աչքումը կամայականօրէն ընդունուած բաներ են, որ տգէտ և հասարակ ժողովրդոց մեծ բազմութեան համար մեծարելի կարող են լինել այն պատճառով, որ շատ հին ժամանակներից պորտէ պորտ անց կե-

նալով եւկել են մինչեւ իրանց օրերը հասել։ Հին ժամանակի քուր-
մերն ու քաջանայքն որ այդպիսի առասպելներ հնարել են, կամ
խարեբայ են եղել, կամ խարուած, ինչոքէս նորերն էլ այսպէս
են հաւատում նորա։ և պատմեն թէ՝ իրաւունքը միայն նորամն
է որի բազգը որ բերում է ապահով զայն որ այս անձնաբնու ու առզան
մտքի այս աստիճան ծոռուելն ու սրտի այդպէս սահատիկ կեր-
պով քարանողը շատ անգամ ուղեցել եմ մի ջոկ տեսակը նոյն իսկ
մեր Ատեղծողից տնօրինած մի ընտելան տնակութիւն համարել ։
Կեանքի շրջանի մէջ պատահումեն ընդհանրապէս ամենատարբեր
տեսակաւորութիւնները մինչեւ անգամ այնպիսիք որ սովորական
կամոնից բոլորովին դուրս են։ Աան քոյսերի և կենդանիների մէջ
իւրեանց մեծ տարրերութեամբն՝ այնպիսի մասնաւոր տեսակներ,
որ իրանց ընդհանուր տեսակի միւս քոյսերի հետ հազիւ մի հետո-
ւոր նմանութիւն ունին։ Կարծես թէ՝ նոյնն է որպատահում և մար-
դոց ունակութեանց մէջ։ Աան օրինակներ, որ ամենապատուակոն
ծնողաց զաւակներ են եղել, որոնք չնոյելով հօր ու մօր ամենայն
հոգացողութիւններին ու ինուուին՝ իրանց կրթութեան և լու-
մեծացնելուն համար՝ ոչ ուսումնի, ոչ խրամաելով, ոչ խնդրելով,
ոչ համոզելով ոչ սիրտ տալով և ոչ պատժով կարելի է եղել նո-
րանց փոխնել ու լուսացնել։ Օրինակի համար ասենք՝ այնպիսի լու-
ծնօգք են եղել որոց զաւակներն արդէն շատ շուտ՝ հենց լուզ-
րութիւնից ցոյց են տուել իրանց անքնական հակումն զէպի ա-
նաւակութիւն և ինքնապղծութիւն։ ուրիշ երեխիերք ցոյց են
տուել մի անյաղթելի հակումն զէպի նենգամիտ չարախնդացու-
թիւն և միայն դորա համար են ինելք ունեցել. ուրիշները ցոյց են
տուել մի անփոփոխնելի ձգտում գէպի գոզութիւն, ուրիշները
ցոյց են տուել մի բոլորովին յայտնի ատելութիւն և հակառա-
կութիւն այն ամենայն բանի, ինչ որ մարդկօրէն ազնիւ է ու գե-
ղեցիկ։ Այս բերած օրինակներիս համար ինչ ամենք՝ Մենք
սարսափումենք նախախնամութեան մեզ անյայտ խորհուրդների
առաջն և երջանիկ ենք մեզ համարում այս հոգեսրապէս խե-
ղաթիւրութիւնների հետը անհամեմատ շատ վսիմ ընաւորու-
թեան ոէր մարդիկ ճանաչելով ու տեսնելով միշտ։

Բայց այսպիսի գիտուածներ, որ մարդկային կերպարանքով
ծնած հրէշներ էլ գտնվում են աշխարհիս երեսում, շատ քիչ են
պատահում իրեւ բացառութիւններ մարդկային ազգի մէջ։ Աւե-

ի յաճախ պատահումեն մոքով ու սրտով աւերռւածներ ու ապականուածներ՝ վատ կրթութիւն տալուց, անխնամ թողնելուց, կամ ծուռ կերպով միաբը լուսուորելուց, կամ չափ ու սահմանից գուրով գալուց միտքը լուսաւորելումը։ Պատճառ որ՝ ինչպէս մարդուս մարմինն, երբ որ ինքն սովորութիւն է անում իւր համար՝ տարբիներով՝ մի որոշ գործով պարապել, ու այդ մշտական պարապմունքից ու մի որոշ կենցաղավարութեան կերպ բռնելուց՝ մի անգարսնանելի ծամածութեան է պատահում, նոյնն է և մեր բանականութեան կողմանէ։ Այն մարդիկն, որ մի կրքի իշխանութեան ապակն են բնկած բոլորովին և միշտ մտածումեն միայն մի բանի վերաց, այն է իրանց ցանկութիւնը կատարելու որից յետ կենալ այլ ևս կարող չեն. իրանց այս միակ մտածմունքն այնպէս իրանց երեակայութիւնների կետրոնն են շինում, այնպէս իրանց գոյութեան սովորութիւնն են անում, որ վերջապէս իրանց բանականութեան բոլոր ուղղութիւնը մի ծոռած, հիւանդուս աւերռած զրութեան է հանում։

Նոյն կերպով առաջ է գալիք շատ անգամ սրտով բոլորովին անզգայնալը դէպի կրօնն և ամեն մի բարի ու ճշմարիտ բանի համար արգէն մեռած լինելը։ Երբեմն կարող է առաջ գալ այդ ողբալի զրութիւնը կամաց կամաց դէպի բարոյական անկումն տանող մարդուս մէջ զարգացած ծուռ երեակայութիւններից, որոց մէջն ընկել է իրրե ջրի պտոյտի մէջ, ու պիտի խեղդուի, դուրս գալ, ազատուելու հնար չկայ։ Այս ասածիս վկայութիւն են բանուած ու բանտարկուած մեծ ճանապարհների վերայ աւազակութիւն անողներն ու մարդասպաններն, որ իրանց փոքր հասակից վարժվում են իրանց վատանուն, անզգամ և ապիրատ ծնողներից ամենայն անպիտանութեան ու չարազործութեան մէջ, և առանց կրօնական գաղափարի և զգացմանց են մեծացնվում, կամ թէ նորանցից ստացել են ամենածուռ ու վատ կրօնական գաղափարներ։ Այսպիսի անբազգներն յետոյ բթացած են եղել ամեն մի լաւ ու բարի բանի համար, որ իրանց ծիծաղելի են երեւացել ամենահամոզակեր խօսքերն, խրառներն և ուսմունք, որ սոքա աւելի լաւ են համարել առանց տունի ու տեղի և առանց պաստանարանի՝ կենաց մշտական վտանգների մէջ գանուել, աւելի լաւ են համարել ամենայն չարիք ու անբազութիւն տանել, քան թէ խաղաղ քաղաքական հանգամանքների մէջ պատուաւոր

կերպով ապրել։ Այսաեղ մարդու մէջ անասնականն ու գաղանականն մարդկոյին քնութեան տրժանաւորութիւնը գրեթէ անհետէ կորցրել, նորան անասուն ու գաղան դարձնելով։ Բայց միւս կողմից նոյն չարիքն գանվումէ յաճախնոյնպէս ազգի մինչեւ անգամ լուսաւորեալ գասակարգների մէջ, երբ որ կամ պատանեկութեան հասակի մէջ, կամ երիտասարդութեան սկզբուներումը թէեւ քաղաքական կարգին յարգանք տածել է պահանջուել, բայց կրօնականի համար անվութութեամբ խնամք յէ տարուել նոցա հաւատոյ և առաքինութեան մասին, կամ երբ որ շատ լուսաւորուել են ցանկացել, այդ՝ գեռ ևս երիտասարդութեան հասակը չառածներն ամեն բանի խելք հասցնել ու հսկանալ, ի՞նչ գիրք հասնի, կարգացել են, իրանց արած միակողմանի դասղութիւնների մէջ շատ խորն են գնացել, խելքներին ոյժ տալով անկարգ կերպով, այնաեղ են եկել, որ շատ բաների վերայ, քանի գնացել են, աւելի և աւելի սկսել են կառկածել, և վերջապէս ամեն բան հերքել են։ Աստուած, առաքինութիւն և անմահութիւն։ Այն ժամանակ նոքա իրանց բանականութեան համարձակ և կարծած բարձր դատողութեամբն իրանք իրանց շատ հաւանել են, ինչու որ իրանցից զոկ՝ աշխարհիս բոլոր մարդոց գէմ խօսել կարողանալը մեծամիտ մարդու համար մի զօրաւոր գրգիռ ու հրապար ունին։ Մանաւանդ եթէ սորա հետ միասին գիտեն իրանց անհաւատութիւնը մի փայլուն սրամնութեամբ հանդէս հանել, այն՝ իր մեծ՝ համարումն են ունենում, որ իրանց համամիտ մերձաւորների և ընկերների ոչ միայն հաւանաւթեանն են արժանանում, այլ և իրանցից չէ պակասում մինչեւ անգամ նոցա զարմանքն, որ այդշափ հասկացողութիւն ու սրամնութիւն ունին։ Այսպիսով իրանց անսխալականութեան մասին ունեցած հաւատին մէջ զօրանալով, առանց խղճմուանաց խայթի գործնական կեանքն են փոխադրում իրանց իր հիմնական և հաստատուն գտղափարներն։ Եւ ի՞նչն է այնուհետեւ նորանց արգելք լինում ծածկաբար անպատիւ ու խարդախ գործ բռնելուց, միայն թէ չիմացուի, ոչ մի կերպ հոտը գուրս յգայ։ Կամ թէ արհամարհել ամուսնութեան սրբութիւնն ու իրանց ամօթալի ցանկութիւնների հուեիցն ընկնել, միայն թէ այդ բանը մի տեսակ պարկեշտութեամբ կարողանան անել։ Նոքա ուրիշ աւելի մեծ չարտզործութիւն անելուցն էլ չէին վախինալ, կամ յետ քաշուիլ, եթէ

ւր վախենալու բան չլինէր թէ՝ քաղաքական փշտանաթիւնն իրանց արած ջար գործը պուցէ բայց կանի ու իրանց կը պատժի Մենք հարցնումենք՝ ի՞նչ աչքի ընկնելու մեծ տարբերութիւն կաց շատ անգամ մի շատ լուսաւորեալ Աստուածն ուրացած մարդու արած փուլութիւնների մէջ և մէջ ճանապարհների ու փողոցների մէջ կողոպատղու մարդասպան աւազակի գաղանական վայրենութեան մէջ՝ սորանցից մէկի սրտոքին կրթութեան և՝ իր մեծ իմաստութեան վայլը՝ թէւ անհամեմատ կերպով աւելի բարձր է՝ բայց իւրներքին՝ բոլորովին զուրկ լինելն այն բանից, ինչ որ մարդու ամենումեծ արժանաւորութիւնն է, որ նա կորցրել է իւր բարոյական անկումովն, կարելի է, նոյն չափով իրան վայր է ծգում և աւելի վատ կերպով՝ քան թէ աւազակին։ Այս որոտի և մոքի այս ի՞նչ աստիճանի անապատանալ է՝ այն ամեն բանից, ինչով որ՝ մեր գոյութեան կոյմանը համեմատ՝ մարդս Աստուծոյ պատկեր լինէր և ինչ որ մեզ Աստուծոյ գաւակ պիտի անէր։

Այսպէս սրբի՝ իսելքի հետ միասին անզգայանալն ու քարանալն տանումէ դէպի սարսափելի կորուստ, շատերին մինչեւ անգամ դէպի կախաղան, կամ սպանման տեղը, շատերին էլ ինքնասպանութեան։ Մոքի դեգ յամառութեան կիրքը իւր զոհն է ուզում։ Ավարդարադատ Աստուած, Գու պահիր մեզ այսպիսի զգուելի ու զորհուրելի բարոյական անկումից։

Աարելի է, որ այս տողերս կարդացողի մէկն արգելն դէպի բարին ինքնահան հակառակութեան ճանապարհի մէջն է։ Այդոինին հատունանումէ կորստեան համար։ Աստուծոյ Սուրբ Հոգին նորան զգուշացնումէ —, բայց, կարելի է, շատ ուշ է Արդէն նա իւր վերայ ոչ իշխանութիւն ունի և ոչ ոյժ, որ իւր վերայ իշխել կարողունար։ Մոլութեան լայն, հարթ ճանապարհը զնումէ դէպի ցած բայց՝ երկնքի ասողերից բարձրումն իշխումէ ու կառավարում աշխարհս՝ մի հասուցանող Աստուած։ — Մահուան Ժամից յետոյ՝ հոգւոյ՝ համար զեր ևս ամեն բան վերջացած չէ։ Ավ որ ինքն իրան կորյնել է ուզում։ Նա կարած է։

Արդամն է և ԱՇ, ամենագէտ Աստուած։ Ի՞նչողէս կարող է մի մարդ միւսի վերայ այս բանը վստահաբար ասել։ Միայն Դու, յաւիտեանս որտեր քննող Տէր, միայն Գու գիտես թէ՝ մի մարդ կային սիրայիակուած պիտի մնոյ ամենայն միջոյների դէմ, որ

փոխուի, լաւանայ: Կարելի է, որ ըստ երեսյթին ամենաանզգայ մարդն անգամ գեռ ևս ունի քիչ շատ ընդունակութիւն առաքիս նութեան, քրիստոնէութեան և իւր անձը փրկելու համար: Այդպիսաւոյն տուր, Տէր գորա համար ո՞ժ: Այդպիսի մարդոյն, ով Դու սղորմած երկնաւոր Թագաւոր, այդպիսի մոլորեալին դարձեալ առաջնորդիր գէպի իւր երջանկութիւնը, գէպի ճանոցումն իւր բարձր արժանաւորութեան: գէպի հաշտութիւն Քեզ հետ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:

(Պատկեր.)

Գ. Ե. Ա.

ՀԱՅՈՍՏՈՆԵՍՑՅՈՒ Ա. Ա. Ա. Ֆ. Ե. Ա. Կ. Ա. Ա. Ս. ԵԿԵՂԵՑԻՈԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:

(ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎԱԿ, 1886 թ. Դ.)

ԳԼ. ԺԱ.

Էջմիածնեցիք հրաւիրակների գրերով Յովսէփի մահը և այնոեղ պատահած անցքերը իմանալուց յետոյ, անմիջապէս 1801 Մարտ 16 - ին միաբանական ժողովով նորից լնտրեցին Դանիէլին, և Դաւիթ Էնէգեթեյու առաջարկութեան համեմատ Նրեանայ հայ մեծամեծների հաւանութիւնը և Նրեանայ խանի հաճութիւնը առնելուց յետոյ Մարտի 20 - ին Պառաւեան Յովհաննէս եպիսկոպոսին և Դանիէլի ջերմ կուսակցից Աշտարակցից Ներսէս վարդապետին հրաւիրակ ուղարկեցին: Հրաւիրակները Եւդոկիա գեռ չեն հասել Թիֆլովի մեծամեծները Յովսէփի ձեռնասուն Գրիգոր վարդապետի զրդմամբ ինդրեցին Նրեանայ խանին որ Դաւիթին կամուզիկոսացնէ, իսկ ինքն Դաւիթ իւր եղբօր աներ Աքրահամ Աղամալեանի միջոցաւ արգէն զրաւել էր Նրեանայ մեծամեծներին:

Էջմիածնի վանականները տեսնելով Դաւիթի ձգումն, իջման տաճարում ուխաեցին բացի Դանիէլից ուրիշ ոչ ոքի ըլճանաչել կամուզիկոս: և այս որոշումը յայսնելով Նրեանայ խանին՝ նորա հաճութեամբ Դանիէլի գալուստը շտապիցնելու համար նոր հրաւիրակներ ևս ուղարկեցին: Խնդն Դաւիթ եպիսկոպոս ևս հրաւիրակների ձեռքով մի թուղթ ուղարկեց Դանիէլին խնդրելով շտապել գալ Էջմիածնի: Նոր հրաւիրակները հասանելով Կարին և տեսնելով որ Դանիէլ Կարին դեռ չէ հաօել, ճեպընթաց թղթաւա-